

1920 թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Նարինե Մ. Սովետյան

ԳԱԱ. պատմության ինստիտուտ, Երևան, ՀՀ

Ամփոփում

Նախարան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմի տարբեր հարցերի վերաբերյալ հայ պատմագրության մեջ իր ուրույն խոսքն է ասել խորհրդահայ պատմագրությունը: Հողվածում ներկայացված է պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի անդրադարձը խորհրդահայ պատմագրության մեջ՝ որպես պատերազմի պատճառների վերիանման, հետևապես պատերազմի բնույթը, դրա ընթացքն ու ավարտը նախանշող ժամանակահատված: Մեթոդներ և նյութեր. Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել խորհրդային ժամանակաշրջանի պատմաբանների մենագրություններն ու հոդվածները, որոնց պարունակած նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել վեր հանել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակը խորհրդահայ պատմագրության մեջ: Վերլուծություն. Խորհրդային պատմագետները, ստեղծված անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակի պատճառները լրւսաբանում են մասնակի դրդապատճառներով: Դրանցից հիմնականներն են. Հայաստանի արևմտամետ դիրքորոշում, Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջարկվող օգնության մերժում և այլն: Արդյունքներ. Աշխատանքի արդյունքում վեր են հանվում խորհրդային պատմագիտության դիրքորոշումները այն իրադարձությունների վերաբերյալ, որոնց պատճառով 1920 թ. աշնանը հայ ժողովուրդը կանգնեց թուրքական ոչնչացման վտանգի առաջ:

Բանալի բառեր՝ Խորհրդային Հայաստան, պատմագրություն, Հայաստանի Հանրապետություն, Անդրկովկաս, քևմալական կառավարություն, թուրք-հայկական պատերազմ, ռազմաքաղաքական, խորհրդա-թուրքական հարաբերություններ:

Ինչպես հղել՝ Մովսեսյան Ն., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի ռազմաքաղաքական իրավիճակի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ. // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 2 (26): 62-74
Էջեր: DOI:

ELUCIDATION OF THE MILITARY AND POLITICAL SITUATION ON THE EVE OF THE TURKISH-ARMENIAN WAR, 1920, IN THE SOVIET HISTORIOGRAPHY OF ARMENIA

Narine M. Movsesyan

Institute of History of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: In 1920, on various issues of the Turkish-Armenian war, the Soviet-Armenian historiography expressed its special word in Armenian historiography. The article presents the military-political situation on the eve of the war in Soviet Armenian historiography as the explanation of the causes of the war, the period that determines the nature of the war, its course and end. Methods and materials: The primary basis for the methodological study of the work was monographs and articles by historians of the Soviet period, by the methodology of comparison, and analysis of the materials contained in them, in 1920 an attempt was made to identify the coverage of the military-political situation on the eve of the Turkish-Armenian war in Soviet Armenian historiography. Analysis: Thus, Soviet historians, the reasons for the current unfavorable military-political situation are highlighted by partial motives. The main ones are: Armenia's pro-Western position, Refusal of assistance offered by Soviet Russia, etc. Results: As a result of the work, the positions of Soviet historiography on those issues that, in their opinion, relate to 1920 are revealed. In autumn, the Armenian people faced the threat of Turkey's destruction.

Key words: Soviet Armenia, historiography, Republic of Armenia, Transcaucasia, the Kemalist government, Turkish-Armenian War, military-political, Soviet-Turkish relations.

Citation: Movsesyan N., *Elucidation of the Military and Political Situation on the Eve of the Turkish-Armenian War, 1920, in the Soviet Historiography of Armenia.*// «Scientific works» of SCAS NAS RA. Gyumri, 2023, 2 (26): pp. 62-74. DOI:

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ СИТУАЦИИ НАКАНУНЕ ТУРЕЦКО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1920 г. В СОВЕТСКОЙ - АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Нарине М. Мовсесян

Институт истории НАН, Ереван, РА

Аннотация

Введение: В 1920 г. по различным вопросам турецко-армянской войны свое особое слово в армянской историографии высказала советско-армянская историография. В статье представлен взгляд на военно-политическую ситуацию накануне войны в советско-армянской ис-

ториографии как на период выявления причин войны и, следовательно, характер войны, ее ход и завершение. Методы и материалы: Первоочередной основой для методологического исследования работы послужили монографии и статьи историков советского периода, методологией сопоставления, сравнения и анализа содержащихся в них материалов была предпринята попытка выявить в 1920 г. освещение военно-политической ситуации накануне турецко-армянской войны в советской армянской историографии. Анализ: Таким образом, советские историки, освещают причины сложившейся неблагоприятной военно-политической ситуации частичными мотивами. Основные из них: Прозападная позиция Армении, отказ от помощи, предлагаемой Советской Россией и т.д. Результаты: В результате работы выявляются позиции советской историографии по тем вопросам, которые, по их мнению, относятся к 1920 году. осенью армянский народстал перед угрозой уничтожения Турцией.

Ключевые слова: Советская Армения, историография, Республика Армения, Закавказье, кемалистское правительство, турецко-армянская война, военно-политический, советско-турецкие отношения.

Как цитировать: Мовсесян Н. *Освещение вопроса военно-политической ситуации накануне турецко-армянской войны 1920 г. в советской - армянской историографии.*// «Научные труды» ШЦАИ НАН РА. Гюмри, 2023, Т. 2 (26): сс. 62-74. DOI:

ՆԱԽԱԲԱՆ. Ինչպես ընդհանրապես Հայաստանի, այնպես էլ թուրք-հայկական պատերազմի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ խորհրդային (բոլշևիկյան, կոմունիստական) պատմագիտության ներկայացուցիչները մեզ հայտնի պատճառներով շատ հարցերում անխուսափելիորեն առաջ են քաշել միակողմանի, կուսակցական-դասակարգային դիրքորոշում: Խորհրդային հեղինակների կողմից թե՝ նախապատերազմյան ժամանակաշրջանի իրավիճակների, թե՝ պատերազմի ընթացքի ու դրանից հետո ընկած ժամանակահատվածի իրադարձությունների լուսաբանումը կատարվել է ոչ ամբողջական:

Ուստի է նշել սակայն, որ խորհրդահայ մի շարք պատմաբաններ, հատկապես խորհրդային ժամանակահատվածի երկրորդ կեսին, չնայած մարքսիզմի տեսանկյունից են մեկնարանել իրադարձությունները, սակայն մեծ ավանդ են ունեցել ժամանակի պատմագիտական մտքի ձևավորման հարցում:

Նրանցից շատերը, ապրելով ու ստեղծագործելով նաև հետխորհրդային ժամանակաշրջանում, ձերքազատվելով գաղափարախոսական հարկադրանքից, վերանայեցին նախկին դիրքորոշումները, հանդես եկան նոր հոդվածներով, իրապարակումներով ու մենագրություններով, որտեղ շրջանառած նորահայտ փաստերի ու տեղեկությունների համարմամբ նորովի անդրադարձան հարցին¹:

Այդ տեսանկյունից խորհրդային պատմագիտական միտքը պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի. մինչև 1980-ական թթ. վերջերն ընկած ժամանակաշրջանը և դրանից հետո: Հետևաբար, մեր նպատակն է փորձել նորովի անդրադառնալ նրանց տեսակետներին՝ վեր հանելու խորհրդային ժամանակաշրջանի պատմագիտական մտքի առանձնահատկություններն ու որոշել գաղափարական ուղղվածության առանցքները: Նշված խնդիրն ինքնին առաջ է քաշում հարցի արդիականության հիմնա-

¹ Նշված հեղինակներից են Է. Զոհրաբյանը, Լ. Խուրշույանը, Գ. Գալոյանը և այլք:

վորումը, ինչը ենթադրում է նորովի լուսաբանել խորհրդային պատմագիտության դեռևս ուսումնասիրության կարոտ էջերը:

Օռուսաստանի անդրկովկայայն քաղաքականության լուսաբանումը

Խորհրդահայ պատմագրության մեջ:

Խորհրդահայ պատմագիտության միակողմանի դիրքորոշումն իր արտահայտությունը գտավ հատկապես թուրք-հայկական պատերազմի նախօրեին տարածաշրջանում իրադարձությունների լուսաբանման հարցում: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդային հեղինակներն իրավացիորեն Հայաստանը համարել են մեծ տերությունների ռազմական բախումների, դիվանագիտական մրցապայքարի թատերաբեմ: Սակայն ստեղծված ռազմաքաղաքական անբարենպաստ իրավիճակի պատճառները, որոնք հանգեցրին պատերազմին, լուսաբանվում են մասնակի դրդապատճառներով: Դրանցից հիմնականներն են. Հայաստանի արևմտամետ դիրքորոշում, ՀՅԴ-ի կողմից վրացի մենշևիկների ու Ազրբեջանի մուսաֆարականների հետ համագործակցում, ՀՀ կառավարության կողմից Սևրի պայմանագրի հետ հույսերի կապում և Խորհրդային Ռուսաստանի կողմից առաջարկվող օգնության (հիմնականում ռազմական) մերժում և այլն:

Վերջին միտքն առավել արտահայտվեց խորհրդային Ռուսաստանի անդրկովկայան քաղաքականության անվերապահ արդարացման, նրա դրական դերի գերազնահատման ու չափազանցման առնչությամբ: Ըստ այդմ, Հայաստանի ազատագրության հարցը մեծապես կապվել է Խորհրդային Ռուսաստանի փրկարար ուժի հետ, իսկ այդ փրկության ի դերև ելնելը՝ Հայաստանի կառավարության կողմից Խորհրդային Ռուսաստանի առաջարկած օգնության մերժման, այդ թվում՝ նրան դեպի Թուրքիա տրանզիտի իրավունք տալու հարցում [1, էջեր 24-125: 15, էջեր 21-104: 18, էջեր 31-35: 5, էջ 68], ինչպես նաև այդ օգնությանն ուղղ կամ առհասարակ չղիմելու հետ: Այնինչ, ըստ հեղինակների, այդ օգնությամբ կկասեցվեր պատերազմը [1, էջեր 49-50, 105: 22, էջեր 14, 254-255]:

Նշված ժամանակաշրջանի պատմագետների կողմից չկ շեշտվում ռազմական օգնություն խոստանալու դիմաց Ռուսաստանի կողմից Հայաստանին ներկայացվող պայմանները. այն է՝ խորհրդային կարմիր բանակի մուտք Հայաստան, ինչը ոչ այլ ինչ էր, քան ՀՀ-ը խորհրդայնացնելու պայման: Հակառակ դրան, բոլշևիկյան կուսակցությունը ներկայացվում է որպես դաշնակցական կառավարության կործանարար քաղաքականությունը վեր հանող, Անդրկովկասի ժողովուրդներին բաժին ընկած բոլոր աղետներում ու դժբախտություններում ՀՅԴ հանցանքը բացահայտող միակ ուժը [17, էջ 440]:

Զ. Կիրակոսյանի խմբագրականում Սևրի պայմանագրի իրագործմանն ուղղված դաշնակցական գործիների ջանքերը ներկայացվում է որպես գործունեություն, որը դատապարտված էր ձախողման, ինչը նրանց տարավ ազգակործան ձանապարհով, այնինչ. «...Սովետական Ռուսաստանի վրա հենվելու դեպքում անհնար չէր թուրքական այլամերժ նացիոնալիզմի սանձարձակության չափավորումը» [10, էջ 54-55]: Նշված կարծիքը հաստատվում է այն «փրոդությամբ», որ «Քեմալական Թուրքիայի հետ դիվանագիտական առաջին իսկ կոնտակտներից սկսած՝ Սովետական Ռուսաստանի

կառավարությունն արտաքին քաղաքականության իր բոլոր գործողություններով սատար էր կանգնում հայ ժողովրդին» [10, էջ 46]:

Լ. Խուրշուլյանն իր «Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը» մենագրության առաջաբանում նշում է. «Մինչդեռ նյութերի բարեկարգ վերլուծությունը ցույց է տալիս, որ 1917-1918 թվականների չափազանց բարդ իրադրության պայմաններում հայ ժողովրդի միակ անշահախնդիր պաշտպանը եղել է Սովետական Ռուսաստանը» [6, էջ 6]: Նա գտնում է, որ կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունն այդ ծանր տարիներին ջանք չեն խնայել, օգտագործել են բոլոր հնարավոր միջոցները հայ ժողովրդին փրկելու, Հայկական հարցը լուծելու համար: Սակայն «դաշնակցականները, երես դարձնելով հայ ժողովրդին Սովետական Ռուսաստանի անշահախնդիր օգնությունից, շարունակում էին հակահեղափոխական գործարքը մուսաֆաթականների և մենշևիկների հետ» [6, էջ 6].-գրում է Լ. Խուրշուլյանը:

Խորհրդային Ռուսաստանի հայամետ ու խաղաղասեր կեցվածքի աննախադեպ ջատագովությամբ է տողորված Ա. Եսայանի «Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը» աշխատությունը, որում նա Խորհրդային Ռուսաստանի՝ Հայաստանի պաշտպանելուն ուղղված «ջանքերի» նկարագրությանը մի ամբողջ զլուխ է նվիրել «Սովետական Ռուսաստանի դիվանագիտությունը ամենուր հայ ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում» խորագրով [4, էջեր 321-351]:

Հեղինակը, Խորհրդային Ռուսաստանին ներկայացնելով որպես թուրք-հայկական կոնֆլիկտը լուծելու ազնիվ մղումներով ու նպատակներով անշահախնդրորեն առաջնորդվող պատրաստակամ կողմ, կարծիք է հայում, որ նրա արտաքին քաղաքականությունն ուղղված էր Մերձավոր Արևելքում և Կովկասում ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելուն և պետությունների միջև եղած վեճերը արդարացիորեն կարգափորելուն: Ըստ նրա՝ Խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին ցույց տրված օգնությունը բազմակողմանի էր և կոչված էր կայունացնելու Հայաստանի միջազգային իրավական վիճակը և վերացնելու հայ ժողովրդի զլմին կախված մահացու վտանգը [4, էջեր 230-231, 237, 241-242]:

Ա. Ալիխանյանի մենագրության խորագիրը խոսուն արտահայտությունն է նրա պատմագիտական հայացքների՝ «Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում»: Հեղինակը ներկայացնում է, որ իր կողմից նպատակ է դրվել բազմակողմանիորեն շարադրել Խորհրդային Ռուսաստանի կառավարության՝ դաշնակցական կառավարության հետ վարած տարբեր բանակցությունները, կոնկրետ փաստերով ցույց տալ, որ խորհրդային կառավարությունը ձգտում էր ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա լուծել հայ-թուրքական դարավոր վեճը, արդարացի սահմաններ որոշել այդ երկու ազգերի միջև և այլն[1, էջ 8-9]:

Ա. Կարապետյանը նշում է, որ «պատերազմի ընթացքում Հայաստանի դաշնակիցները՝ ԱՄՆ, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և ուրիշներ, հրաժարվեցին Հայաստանը պաշտպանել Թուրքիայի ազրեսիայից: ...Միակ երկիրը, որ բոլոր միջոցները գործ դրեց փրկելու հայ ժողովրդին կործանումից՝ Սովետական Ռուսաստանն էր» [7, էջեր 26, 34]: Այսինչ «Անտանտի պետությունները հրաժարվեցին օգնել դաշնակցական կա-

ռավարությանը՝ Հայաստանը թողնելով Թուրքիայի հոշոտմանը» [22, էջ 27], -գրում է մեկ այլ խորհրդային հեղինակ՝ Ա. Վարդապետյանը:

Խորհրդահայ պատմագրությունը, հանձին Ե. Սարգսյանի, չի վարանել նշել, որ հայ ժողովրդի զինված պայքարը թուրքերի դեմ կրում էր Խորհրդային Ռուսաստանի աշակցությունը: Նա նշում է, որ խորհրդային ուժերը նպաստեցին կամավորական ջոկատների կազմավորմանը Ռուսաստանի տարբեր վայրերում ապրող հայերից, որոնք հասան Հայաստան, դրանց շարքերում կային նաև ոռու կարմիրգվարդիական-կամավորականներ: Այնուհետև, վկայակոչելով վրացական «Заря России» թերթի հրապարակումը, նշում է, որ 1918 թ. հունիսին 250 խորհրդային զինվոր հայերին օգնեցին՝ ջախջախելու թուրքական զորքը Նախիջևանի մոտակայքում [22, էջ 31-32]: Կարծում ենք՝ եթե, իրոք, Ռուսաստանի կողմից օգնական ջոկատներ են ուղարկվել Հայաստան, ապա զարմանալի է, որ գոնե խորհրդային պատմագրության կողմից այդ փաստը պատշաճ ուշադրության չի արժանացել:

Խորհրդային պատմագրությունն անխուսափելիորեն պետք է անդրադարձ կատարեր իրողություն դարձած ոռու-թուրքական (խորհրդա-քեմալական) հարաբերություններին, հետևաբար նաև խորհրդային Ռուսաստանի կողմից Հայաստանին լիարժեք օգնություն չտրամադրելու հարցին: Նրանք չեն ժխտում, որ մոսկովյան բանակցություններին զուգընթաց² խորհրդային կառավարությունը բանակցություններ էր վարում նաև Թուրքիայի հետ [1, էջ 111: 22, էջ 22]:

Ա. Եսայանը մեկնաբանում է, որ «...հայերի բնական և միակ հովանավորողը՝ Ռուսաստանը, այնտեղ սովետական իշխանության հաղթանակից հետո ներգրավված էր անհավասար կրվի մեջ համաշխարհային իմպերիալիզմի ու նրա դաշնակից ներքին հակահեղափոխության դեմ» [4, էջ 233]: Հետևաբար, ըստ հեղինակի, Ռուսաստանը չկարողացավ եղբայրական օգնության ձեռք մեկնել հայ ժողովրդին: Վկայակոչենք մեկ այլ մեջքերում Ա. Եսայանի մենագրությունից. «Հայ-թուրքական կոնֆլիկտը կարգավորելու ասպարեզում Մովետական Ռուսաստանը չէր կարող դուրս գալ իր հնարավորությունների սահմաններից և ոչ մի պարտավորություն չստանձնեց, որը չէր կարող կատարել» [4, էջեր 254-255]: Փաստորեն, պատմաբանը կարծում է, թե չնայած Խորհրդային Ռուսաստանը ձգտում էր իր ուժերի ներածի չափով օգնել, սակայն նրա հնարավորությունները՝ պաշտպանելու հայ ժողովրդի շահերը, սահմանափակ էին:

Ա. Եսայանը եզրահանգում է, որ Ռուսաստանի կողմից Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը հետապնդում էր թուրք և հայ ժողովուրդների միջև հակասությունների վերացման նպատակ՝ որպես ապացույց վկայակոչելով ՌՍՖՌ-ի արտգործնախարար (արտաքին գործերի ժողովրդական կոմիսար) Գ. Չիչերինի խոսքն այդ մասին [4, էջ 243]:

Նույն միտքն են արձանագրում պատմագիտության դոկտոր Ս. Ալիխանյանը և Ա. Վարդապետյանը՝ խորհրդա-թուրքական բարեկամության պայմանագրի կնքումը

² 1920 թ. մայիս-հուլիս ամիսներին Մոսկվայում բանակցություններ էին ընթանում Խորհրդային Ռուսաստանի և դաշնակցական կառավարության միջև, որին Հայաստանի կողմից մասնակցում էր Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը:

մեկնաբանելով հայ-թուրքական հարաբերությունները խաղաղ ճանապարհով լուծելու, Անդրկովկասի և Թուրքիայի հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությամբ [22, էջ 22: 2, էջ 153]:

Մասնավորապես Ա. Վարդապետյանը, որի կարծիքը, ըստ մեզ, որոշակիորեն տարբերվում է, ներկայացնում է, որ այդ պահին Խորհրդային Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը հարկադրեց ուշադրությունը կենտրոնացնել Անդրկովկասի սահմաններում կանգնած 11-րդ կարմիր զորամասերին՝ «...անցնել Հյուսիսային Կովկաս և ձնշել Սովետական իշխանության դեմ սկսված կոնտրօւլյուցիոն խռովությունները» [22, էջ 16]: Հետևաբար, տվյալ պահին խորհրդային կառավարությունը չկարողացավ ուշադրություն դարձնել Հայաստանին: Սակայն նշենք, որ պատմաբանն այդ օգնությունը [իրավացիորեն՝] դիտարկում էր Հայաստանը խորհրդայնացնելու գործընթացի նպատակ:

Է. Զոհրաբյանը խորհրդա-քեմալական հարաբերությունները քննարկում է Սովուտափա Քեմալի կողմից Վ. Ի. Լենինին ուղղված 1920 թ. ապրիլի 26-ի նամակի բովանդակության վերլուծմամբ³: Ըստ այդմ՝ նա անդրադառնում է Քեմալի այն մտքին, որ թուրքական կառավարությունն իր վրա է վերցնում պատերազմական գործողություններն իմացերիալիստական Հայաստանի դեմ: Պատմաբանը հակադարձում է. «...այս հարցում նա (Քեմալը - Ն. Ս.) սխալվել էր: Սովետական Ռուսաստանը Հայաստանը ոչ միայն իմացերիալիստական չէր համարում, այլև իր գոյության առաջին իսկ օրից ձգտում էր իմացերիալիստական գիշատիչների ձեռքին խաղալիք դարձած հայկական հարցին արդարացի լուծում տալ...»[5, էջ 29-30]:

Է. Զոհրաբյանը չի ժիստում, որ 1920 թ. օգոստոսի 24-ին թուրքերի և ռուսների բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրի նախագծով համաձայնություն կայացվեց Թուրքիային ֆինանսական օգնություն ցուցաբերելու և գենք ու զինամթերք մատակարարելու մասին: Պրոֆեսորը, սակայն, Խորհրդային Ռուսաստանի նմանօրինակ վերաբերմունքի դրդապատճանների մասին կարծիք չի հայտնում, ինչը, կարծում ենք, հետաքրքիր լիներ[5, էջ 46]:

Խորհրդա-քեմալական հարբերությունների լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ

Գ. Գալոյանը, ներկայացնելով տարածաշրջանում մեծ տերությունների հակասությունները, նշում է, որ քեմալականները դրանք հմտորեն օգտագործում էին և անարգել առաջ շարժվում Հայաստանով: Պատմաբանը սնանկ է համարում ռուսների կողմից քեմալականների քաղաքականությանը տրված գնահատականը, այն է՝ թուրքերի հետ ռուսների համաձայնողական քաղաքականությունը նպատակ ուներ ապահովելու Անկարայի հեղափոխականների մասնակցությունը Արևելքի ազատագրության ընդհանուր շարժմանը: Գ. Գալոյանը շեշտում է, որ այս գնահատականը ոչ մի ընդհանություն չուներ իրականության հետ և չէր կարող հայերին համոզել դրանում, քանի որ

³ Հարկ ենք համարում նշել, որ Ս. Քեմալի հիշյալ միտքն արտացոլված է ոչ թե Լենինին հղված հրա նամակում, այլ՝ նոյն թվագրմամբ Թուրքական Ազգային մեծ ժողովի՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությանն ուղղված առաջարկներում: [24, c. 50-51].

«Անկարայի հեղափոխական իշխանությունները» Հայաստանում շարունակում էին Արդուլ Համիլի ցեղասպանության քաղաքականությունը [3, էջ 303]:

Հստ Ս. Քաղյանի դիտարկման՝ Գ. Գալոյանի կարծիքն (տե՛ս Գալոյան Գ., «Հայաստանը և մեծ տերությունները», էջ127) էականորեն տարբերվում էր խորհրդային պատմագիտության այն մոտեցումից, որ իբր խորհրդա-քեմալական հարաբերություններն անվերապահորեն բարեկամական էին: Գալոյանը նշում է, որ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերությունների ձևավորումն ընթանում էր փոխադարձ կասկածամտության մթնոլորտում [23, էջ 113]:

Պրոֆեսոր Ե. Սարգսյանը չի ժիստում Խորհրդային Ռուսաստանի նյութական օգնությունը Թուրքիային՝ դրանով ինքնըստինքյան ընդունելով քեմալա-բոլշևիկյան դաշինքը: Պատմաբանը, սակայն, շեշտադրում է այդ հարցում Թուրքիայի երկդիմի քաղաքականությունը, որը մի կողմից ուղղված էր արևմտյան իմպերիալիզմի դեմ համագործակցությանը, մյուս կողմից՝ Հայաստանի կործանմանը և Անդրկովկասյան երկրամասում Թուրքիայի հաստատվելուն⁴:

Ս. Ալիխանյանն անհեթեր է համարում այն, որ թուրքերը Սարիդամիշի ուղղությամբ իրենց հարձակումը արդարացնում էին այդ տարածքների վրայով Խորհրդային Ռուսաստանի հետ կապ ստեղծելու հանգամանքով: Նա չի ժիստում, որ անգամ խորհրդային դեկավար շրջաներում դրան հավատացողներ կային և խիստ քննադատում է վերջիններին: Հեղինակը չի հակառակվում Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովում Չիչերինի այն կարծիքին, որ Թուրքիայի հարձակումը գուցե սթափեցներ դաշնակցականներին, և նրանք հասկանային, որ հայ ժողովրդի վրկությունը կապված է Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ սկսելու և Անտանտի իմպերիալիստներից հեռանալու հետ [1, էջ 139-140]:

Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի համահեղինակները (որոնցից է Գ. Գալոյանը) մի կողմից կարծես ժիստում են քեմալա-բոլշևիկյան հարաբերությունների գոյության փաստը. «Պատերազմում կրած պատասխանատվությունն իր վրայից գցելու նպատակով, դաշնակցական կառավարությունը սկսեց աղաղակել Հայաստանի դեմ ուղղված ինչ-ոք «համաձայնության» մասին, որն իբր թե գոյություն ուներ խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև» [9, էջ 106]:

Մյուս կողմից նրանք գրում են, որ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը միաժամանակ բանակցություններ էր վարում Մոսկվա ժամանած Անկարայի կառավարության պատվիրակության հետ՝ ձգտելով օգտագործել այդ բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի սահմանների հարցը ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու համար և փորձում վերջ տալ այն անորոշ վիճակին, որ ստեղծվել էր այդ երկու երկրների միջև: Որպես սկզբնաղբյուր վկայակոչվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալին ուղղված 1920 թ. հունիսի 3-

⁴ Ե. Սարգսյանը հետազոտում գրած հոդվածում նորովի և ավելի քննադատաբար մոտեցավ հարցին: Վերանայելով նախկինում իր արտահայտած տեսակետները՝ նա գրում է, որ քեմալականների քառզության հաջողությանը քիչ չնպաստեցին Հայաստանի հեղկոմի դեկավար հայ բոլշևիկները [19, էջեր 19-34; 23, էջեր 146-149]:

ի Գ. Չիչերինի գրությունը. «Սովետական կառավարությունը հուսով է, որ դիվանագիտական բանակցությունները Ազգային մեծ ժողովին թույլ կտան հաստատել մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Հայաստանի և Պարսկաստանի ճիշտ սահմանները, որ պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը» [9, էջ 96-97]:

Հատորի հեղինակները, ցավոք, նույնպես ընդունում են այն ձևակերպումը, որ 1920 թ. Թուրքիայում նրա անկախության համար պայքար էր սկսվել օտարերկրյա իմպերիալիստների դեմ⁵: Հետևաբար, քանի որ քեմալականների շարժումն ուղղված էր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի կատաղի թշնամիների՝ Անտանտի իմպերիալիստների դեմ, Խորհրդային Ռուսաստանը պաշտպանում էր այդ շարժումը: Միաժամանակ հաստում նշվում էր, որ ընդհանուր առմամբ հակամապերիալիստական քեմալական շարժումն Անդրկովկասում հետապնդում էր նվաճողական նպատակներ [9, էջ 96]:

Ինչ վերաբերում է տարածաշրջանում եվրոպական և ամերիկյան ներկայությանը, ապա խորհրդային պատմագիտական միտքը հատկապես պնդում էր, որ ամենից առաջ հայ ժողովրդի զիվին կախվել էր ամերիկյան մանդատով բերվող ստրկացման ահավոր սպառնալիքը. ՀՅԴ կառավարությունը շարունակում էր հոյսեր կապել Սկրի պայմանագրի, հետևապես՝ Անտանտի տերությունների ու Ամերիկայի Միացյալ Նահանգների օգնության հետ [1, էջ 107: 4, էջեր 230, 243-244: 2, էջեր 6, 14: 11, էջեր 29-31: 20: 21]:

«Անտանտի և անզլո-թուրքական ինտերվենտների հետ ստոր գործարքի մեջ մտան Անդրկովկասի ժողովուրդների ոխերիմ թշնամիներ, մենշևիկները և մուսաֆարականները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեյջանը օտարերկրյա զավթիչներին վաճառելու համար» [13, էջեր 32-33], գրում է Մնացականյանը՝ ստալինյան դարաշրջանի հոդվածում՝ ամփոփելով, որ այս ամենի արդյունքում, դաշնակները և ամերիկա-անզլիական իմպերիալիստները 1920 թ. ամռանը և աշնանը նոր դժբախտություններ բերին Հայաստանին՝ առաջին հերթին նկատի ունենալով պատերազմը [12, էջ 96]:

Նրանք արձագանքում են Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրերին «Կոմունիստ» թերթում լույս տեսած այն դրույթին, թե «Անտանտի արեւելեան քաղաքականութեան ստուեր դարձած՝ Հայաստանի դաշնակցական պետականութիւնը, հասցրեց երկիրը լիակատար սնանկութեան» [8, էջ 2]:

Նշենք, որ խորհրդահայ պատմաբանները թուրք-հայկական պատերազմի նախօրյակի իրադարձությունների լրացարանման հարցում օբյեկտիվորեն են մեկնաբանում քեմալական Թուրքիայի հակահայկական գործողությունները Հայաստանի նկատմամբ: Նրանց կողմից շեշտվում է պատերազմի՝ թուրքերի կողմից նախապատրաստված լինելու հանգամանքը, Արևելյան Հայաստանը ոչնչացնելու ու հայությանը ֆիզիկապես բնաջնջելու հստակ ծրագիր ունենալը: Դրանով իսկ խորհրդային պատմագրությունը բացահայտում է, որ «հեղափոխական» Թուրքիան հանդես էր զալիս որպես իր նախորդի՝ սուլթանական Թուրքիայի իրավահաջորդն ու ժառանգորդը՝ վերաբացելով պանթուրքիզմի ու պանխամիզմի գաղափարարախոսությունը, ապացուցելով, որ հայերի ֆիզի-

⁵ Թեև քեմալական շարժումը սկիզբ է առնում 1919թ. հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը գումարված Էրզրումի կոնգրեսից:

կական ոչնչացումը տեղի էր ունենում պլանավորված՝ որպես պետական քաղաքականություն [5, էջեր 30, 32: 1, էջեր 12, 19-20, 112: 7, էջեր 10, 14-17: 4, էջեր 237, 248: 20: 9, էջեր 96, 16, 48]:

Թեև այս հարցերում ևս արտահայտվել է կուսակցական, խորհրդայնամետ կողմնորոշումը, ինչը ժամանակի շատ պատմաբանների դրդել է քեմալական շարժման հիմքում դնել դրա հակամապերիալիստական և միաժամանակ հակակոմունիստական, Խորհրդային Ռուսաստանի դեմ ուղղված լինելու բնույթը: Ընդգծելով թուրքական արշավանքի վտանգավորությունն ամբողջ կովկասյան տարածաշրջանի համար՝ Ե. Սարգսյանը թուրք օկուպանտների հարձակումը ներկայացնում էր որպես նախևառաջ ձգտում՝ «...վերացնելու ամեն ինչ, ինչը հիշեցնում էր խորհրդային իշխանության մասին, բոլշևիկների մասին» [18 էջ 30]: Կարծում ենք, նման քայլը կարող էր հանդիսանալ միայն որպես թուրքերի հեռահար նպատակ:

Խորհրդային պատմագետներից ումանք, օրինակ՝ Ս. Ալիխանյանը, Ս. Կարապետյանը, Ճշմարտացիությամբ մոտենալով հարցին, սխալ են համարում թուրք-հայկական պատերազմի ամբողջ մեղքը բարդել դաշնակցականների վրա և անտեսել քեմալականների զավթողական քաղաքականությունը, և համոզունք են հայտնում, որ պատերազմն սկսել է թուրքական կողմը [1, էջ 19: 7, էջեր 21-25]: Նրանք իրավացիորեն գրում են, որ Թուրքիայի արշավանքը Հայաստանի դեմ իր եռթյամբ, նպատակներով դուրս էր գալիս հայ-թուրքական հարաբերությունների շրջանակներից և սպառնալիք էր ոչ միայն Հայաստանի, այլև՝ ամբողջ Անդրկովկասի, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի համար:

Ե. Սարգսյանը և Ո. Սահակյանը իրենց համահեղինակային աշխատության մեջ միանգամայն օբյեկտիվորեն մերժում են «ստալինյան այն միակողմանի գնահատականը», քեզ Անտանտի հրահանգով դաշնակները ձեռնարկեցին պատերազմ Թուրքիայի դեմ (տե՛ս Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 458): Նրանք իրավացիորեն նշում են, որ Ստալինի այս գնահատականը կրկնվել է այդ շրջանի պատմությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում, որոնց հեղինակները անտեսում են քեմալականների ազրեսիվ պլանները, Հայաստանի գոյությանը իսպառ վերջ դնելու նրանց ծրագիրը [16, էջ 48]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ: Այսպիսով, խորհրդահայ պատմագետները, հիմնականում անտեսելով Խորհրդային Ռուսաստանի կողմից Թուրքիային տրվող ռազմական և նյութական աջակցությունը, շեշտադրում են վիճելի հարցերը խաղաղ ձանապարհով լուծելու և Հայաստանը թուրքական վերջնական նվաճումից ու ֆիզիկական բնաջնջումից փրկելու Խորհրդային Ռուսաստանի պատրաստակամությունը:

Նախապատերազմյան իրադարձությունների ոչ հայանպաստ ընթացքը նրանց կողմից մեծ մասամբ ներկայացվում է որպես միայն դաշնակցական կառավարության կողմից իրականացվող սխալ քաղաքականության արդյունք, նրանց՝ հակախորհրդային դիրքորոշման, Հայկական հարցի լուծման ձանապարհին խորհրդային առաջարկություններից հրաժարվելու և Սկրի պայմանագրի ազգակործան քաղաքականությունը որդեգրելու, Թուրքիայի հետ անմիջական հարաբերություններ կառուցելու հետևանք:

Այդ ամենի պատճառով, ըստ նրանց, 1920 թ. աշնանը հայ ժողովուրդը կանգնեց թուրքական ոչնչացման վտանգի առաջ:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. Ալիխանյան Ս. Սովորական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատազրման գործում: Երևան: «Հայաստան» հրատ.: 1966: 412 էջ:
2. Ալիխանյան Ս. Գ. Կ. Օրոնիկիհան և սովորական կարգերի հաստատումը Հայաստանում: Երևան: ԳԱ հրատ.: 1974: 223 էջ:
3. Գալոյան Գ. Հայաստանը և մեծ տերությունները: Երևան: ԳԱ «Գիտություն» հրատ.: 1999: 539 էջ:
4. Եսայան Ա. Հայկական հաղորդ և միջազգային դիմանագիտությունը: Երևան: «Միտք» հրատ.: 1965: 374 էջ:
5. Զոհրաբյան Է. Սովորական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները: Երևան: «Զանգակ-97» հրատ.: 1979: 344 էջ:
6. Խուրջույան Լ. Սովորական Ռուսաստանը և Հայկական հաղորդ: Երևան: «Հայաստան» հրատ.: 1977: 210 էջ:
7. Կարապետյան Ս. 1920 թ. թօվականի հայ-թուրքական պատերազմը և Սովորական Ռուսաստանը: Երևան: «Հայաստան» հրատ.: 1965: 91 էջ:
8. «Կոմունիստ» // Երևան, դեկտեմբեր: N 5:
9. Հայ ժողովրդի պատմություն: Երևան: ԳԱ հրատ.: Հ. 7: 1967: 654 էջ:
10. Հայաստանը միջազգային դիմանագիտության և սովորական արտարին քաղաքականության փաստաշոյթերում (1828-1923): Խմբ. Զ. Կիրակոսյան: Երևան: «Հայաստան» հրատ.: 1972: 809 էջ:
11. Հովհաննիսյան Կ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում//«Պատմաբանասիրական հանդես»: Երևան: թիվ 2: 1960: Էջեր 28-41:
12. Մնացականյան Ա. Ամերիկան ազրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից, Երևան, ԵՀ հրատ: 1953: 107 էջ:
13. Մնացականյան Ա. Ամերիկան իմպերիալիզմի 1917-1920 թթ. սովորական իշխանության դեմ կազմակերպած ազրեսիսի ձախողությունների/«Տեղեկագիր»: N 12: Երևան: 1951: Էջեր 17-39:
14. Մնացականյան Ա. Ռենյոցիան Անդրկովկաստ և Ռուսաստանի պատվիրակները (1917-1921): Երևան: «Հայաստան» հրատ.: 1961: 548 էջ:
15. Սարգսյան Ե. Աբեղյան Խ., Սարգսյան Ա. Բ. Լեզրանի միսիան/«Բանբեր Հայաստանի արխիվների»: թիվ 3: Երևան: 1967: Էջեր 21-104:
16. Սարգսյան Ե., Սահակյան Ռ. Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենագափոխումը թուրք պատմագրության մեջ: Երևան: «Հայպետհրատ»: 1963: 96 էջ:
17. Սարգսյան Ե. Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկաստ 1914-1918: Երևան: «Հայաստան» հրատ.: 1964: 536 էջ:
18. Սարգսյան Ե.Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատազրումը // «Բանբեր Հայաստանի արխիվների»: թիվ 1: Երևան: 1970: Էջեր 27-36:
19. Սարգսյան Ե. Քեմալականների 1920-1921 թթ. արշավանքն Անդրկովկաս և 1921 թ. մարտի 16-ի Սովորական պայմանագիրը/«Լրաբեր հասարակական գիտությունների»: N 1: Երևան: 1992: Էջեր 19-34:
20. Սիմոնյան Հ. Թուրք ազգային բուրժուազիայի զաղափարախոսությունը և քաղաքականությունը: Երևան: «Հայաստան» հրատ.: 1986: 564 էջ:
21. Սիմոնյան Հ. Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից: Երևան: «Հայաստան» հրատ.: 1991: 632 էջ:
22. Վարդապետյան Ա. Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կորիներում 1920-1921 թթ. Երևան, ԵՀ հրատ.: 1980: 170 էջ:
23. Քայլյան Ս. Հայաստանի առաջին Հանրապետության պատմության պատմագրություն: Երևան: 2003: ԵՀ հրատ.: 113 էջ:

24. Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий/ ред. и сост. профессор Ю. Г. Барсегов. <http://old.genocide.ru/lib/barsegov/responsibility/v2-1/0648-0685.htm#659>. Դիմելի է՝ 03. 12. 2022.

R e f e r e n c e s

1. Alighanyan S. The role of Soviet Russia in the liberation of the Armenian people [*Sovetakan Hayastani dery hay joghovrdi azatagrman gorcum*], Yerevan: «Hayastan» publ., 1966. 412 p. (In Armenian)
2. Alighanyan S. G. K. Ordzonikidze and establishment of Soviet orders in Armenia [*G. K Orjonikidzen ev sovetakan kargeri hastatumy Hayastanum*], Yerevan: «Izd. GA». 1974. 223 p. (In Armenian)
3. Galoyan G. Armenia and the great states [*Hayastany ev nec terutyunnery*], Yerevan: «GA Gitutyun» publ., 1999. 539 p. (In Armenian)
4. Yesayan A. Arenian question the international diplomacy [*Haykakan Harcy ev mijazgayin divanagityuny*], Yerevan: «Mitq» publ., 1965. 374 p. (In Armenian)
5. Zohrabyan E. Soviet Russia and Armenian-Turkish relations [*Sovetakan Rusastany ev haj-turkakan harabertyunnery*], Yerevan: «Yerevani Hamalsaran» publ., 1979. 344 p. (In Armenian)
6. Churshudyan L. Soviet Russia and Armenian question, [*Sovetakan Rusastany ev Haykakan Harcy*], Yerevan: «Hayastan» publ., 1977. 210 p. (In Armenian)
7. Karapetyan S. Armenian-turkish war in 1920 and Soviet Russia [*1920 tvakani hay-turkakan paterazmy ev Sovetakan Rusastany*], Yerevan: «Hayastan» publ., 1965. 91 p. (In Armenian)
8. «Komunist» // Yerevan: 1920.December. N 5.(In Armenian)
9. The history of Armenian people [*Hay joghovrdi patmutyun*], Yerevan: «Izd. GA».volume 7. 1967. 654 p. (In Armenian)
10. Kirkakosyan J. Armenia in the documents of international diplomacy and Soviet forin political [*Hayastan mijazgayin divanagitaka ev svetaka artaqin qahxaqaqanutyun pastatgterum*], Yerevan: «Hayastan» publ., 1972. 809 p. (In Armenian)
11. Hovhannisyan K. May Uprising in Armenia, [*Mayisyan apstambutyuny Hayastanum*] // «Historical-philological journal», Yerevan: 1960. v. 2. pp. 28-41. (In Armenian)
12. Mnacakanyan A. From the history of the struggle of the Armenian people against the American aggressors and their agent [*Amerikyan agresoneri ev nranc gorcakalneri dem hay jwghovrdi mghac pajqari patmutyunic*], Yerevan: «Yerevan Pet hrat.» publ., 1953. 107 p. (In Armenian)
13. Mnacakanyan A. The failure of the aggression of American imperialism against the Soviet government in 1917-1920 [*Amerikyan imperializmi 1917-1920 tt. Sovetakan ishghanutyan dem kazmakerpac agresiayi dzaghoghumy*]//«Newsletter», Yerevan,1951,v.12,17-39pp.(In Armenian)
14. Mnacakanyan A. The revolutuion in Transcaucasia and the delegates of Russia (1917-1921), [*Revolutian Andrkovkasum ev Rusastani patviraknery (1917-1921)*], Yerevan: «Izd. Haypethrat» publ., 1961: 548 p. (In Armenian)
15. Sargsyan E. Abeghyan Gh., Sargsyan A., B. Legrand's mission, [*Legrani misian*] //«Bulletin of Armenian Archives»,Yerevan, 1967, v. 3, 21-104 pp. (In Armenian)
16. Sargsyan E., Sahakyan R.The changes of History of the New Period of the Armenian people in Turkish Historiography [*Hay joghovrdi nor shrjani patmutyun nengapoghumi turq patmagrutyun mej*], Yerevan: 1963. «Haypethrat» publ., 96 p. (In Armenian)
17. Sargsyan E. Turkey and its policy of conquest in Transcaucasia 1914-1918 [Turqian ev nra nvacoghakan qaraqakanutyuny], Yerevan: «Izd. Hayastan». 1964. 536 p. (In Armenian)
18. Sargsyan E. V. I. Lenin and the liberation of the Armenian people [*Leniny ev hay jochovrdi azatagrumpy*]// «Bulletin of Armenian Archives», Yerevan, 1970, v. 1,1970. 27-36 pp. (In Armenian)
19. Sargsyan E. Kemalists of 1920-1921 invasion of Transcaucasia and Moscow Agreement of March 16, 1921, [*Qemalakanneri 1920-1921 tt. Arshavanqn Andrkovkas ev 1921 t. marti 16-I Moskovyan paymanagiry*] // Yerevan, «Herald of social sciences», 1992, v 1, 19-34 pp. (In Armenian)
20. Simonyan Hr. The ideology and the politics of the Turkish national bourgeoisie [*Turq azgayin burjuaziayi gaghaparaghosutyuny ev qaxaqakanutyuny*], Yerevan: 1986, «Hayastan» publ., 564 p. (In Armenian)

21. Simonyan Hr. From the history of Turkish-Armenian relations [Tutq-haykakan haraberutyunneri patmutyunic]. Yerevan: 1991, «Hayastan» publ., 632 p. (In Armenian)
22. Vardapetyan A. The Red Army of Armenia in civil battles in 1920-1921[Hayastani karmir banaky qaxaqaciakan krivnerum 1920-1921 tt.], Yerevan: 1980, «Yerevani Hamalsaran» publ., 170 p. (In Armenian)
23. Qaryan S. The historiography of the history of the First Republic of Armenia [Hayastani arajin Hanrapetutyun patmutyan patmagrutyun], Yerevan: 2003. «GA Gitutyun» publ., 113 p. (In Armenian)
24. Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии/ ред. и сост. профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1. М., 2003, 50-51 с..
<http://old.genocide.ru/lib/barseghov/responsibility/v2-1/0648-0685.htm#659>. Дата Цитирования.-03. 12. 2022. Genozid armian. Otvetstvennost Turcii I obyazatelstvo mirovovo soobshestwa, dokumenti i komentarii, 2003. (In Russian)

Հնդունվել է / Принята / Received on: 22.08.2023
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 23.09.2023
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 27. 11. 2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Նարինե Մնացականի ՄՈՎՍԵՍՅԱՆ գլուխագործության
ինստիտուտի ավագ լաբորատոր, Երևան, <<
Էլ. հասցե՝ narinem2006@gmail.com. <https://Orcid.org/0009-0004-2506-530X>

Narine Mnacakan MOVSESYAN: Senior Laboratory Assistant,
Institute of History of NAS, Yerevan, RA,
e-mail: narinem2006@gmail.com <https://Orcid.org/0009-0004-2506-530X>

Нарине Мнацакановна МОВСЕСЯН: старший лаборант
Института истории НАН, Ереван, РА,
эл. адрес: narinem2006@gmail.com <https://Orcid.org/0009-0004-2506-530X>